ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«08» հոկտեմբերի 2015թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

N 234-Ա

ՊԵՏԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՎԱԿՆՈՐԴ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի N 821-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 857-Ն որոշման 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1294-Ն որոշման հավելված N 1-ի 14-րդ կետի 4-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել, որ պետական ոլորտի ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում հավակնորդ ծառայողների կողմից ընտրված բնակարանների վիճակահանությունն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի գտնվելու վայրում՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, 4-րդ հարկ հասցեում, 2015 թվականի հոկտեմբերի 9-ին, ժամը 09:00-ին:

2. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Հասմիկ Պետրոսյանին՝ ապահովել հրամանի տեղադրումը ՀՀ քաղաքաշինության նախարարության պաշտոնական կայք էջում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

«08» հոկտեմբերի 2015 թ

ք. Երևան